ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Հայ նշանավոր հեղափոխական դեմոկրատ ու մտածող Միքայել Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հոբելյանական գիտական նստաշրջանը, որը հոկտեմբերի 11-ին բացվեց ակադեմիայի նիստերի դահլիճում։

Նստաշրջանում ներածական խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։

— Հայ ժողովրդի և ռուսական կայսրության պատմության շրջադարձային փուլերից մեկում՝ անցյալ դարի 50—60-ական թվականներին, ծավալվեց Միքայել Նալբանդյանի բուռն գործունեությունը,— ասաց նա։ 30-ամյա ռեակցիայից հետո Ռուսաստանում սկսվել էր հասարակական մտքի զարթոնք, խորանում և ծավալվում էր ազատագրական շարժումը ցարիզմի և ճորտատիրության դեմ։ Մ. Նալբանդյանը եղավ այդ անմոռաց դարաշրջանի ամենամեծ և տիրական դեմքը հայ իրականության մեջ։ Հայ հասարակական, գիտական և գրական միտքը նա բարձրացրեց ռուսական և արևմտաեվրոպական առաջավոր ըմբռնումների մակարդակին, մեծապես նպաստեց նրա հետագա զարգացմանը։ Այսօր էլ մեզ հիացնում են նրա հաղիվ մեկ տասնամյակ տևած գործունեության արտակարգ բազմակողմանիությունը, թափը ու խորությունը, որոնք հատուկ են միայն հասարակական առաջադիմության մեծ ռահվիրաներին։ Մ. Նալբանդյանի բանաստեղծական կրակոտ տողերը տասնյակ սերունդներ են ոգեշնչել, իսկ արձակ էջերը դարձել են մեր ռեալիստական գրականության հիմնաքարերից մեկը։ Նա մեր գրական քննադատության իսկական հիմնադիրն է, արվեստի տեսաբան և գեղագետ, մեր գրական աշխարհարարի կրքոտ պաշտպաններից և առաջին մշակողներից մեկը։ Նա ճիշտ կռահեց հայ ժողովրդի փրկության հեռանկարը, կապելով այն համառուսական և համաեվրոպական ազատագրական շարժման հետ։ Նալբանդյանը դարձավ համառուսական հեղափոխական դեմոկրատիայի խոշորագույն դեմքերից մեկը, մարքսիզմի և սոցիալ-դեմոկրատիայի անմիջական նախորդը հայ իրականության մեջ։ Մեր ժողովրդի հետագա պատմական ճակատագիրը հաստատեց նրա մտքերի արդարացիությունը և իմաստնությունը։ Այնուհետև Վ. Համբարձումյանը խոսեց նալբանդյանագիտության նվաճումների և առաջիկա խնդիրների մասին։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Դ. Ղարիբջանյանը հանդես եկավ «Միքայել Նալբանդյանը հայ առաջին մարքսիստների գնահատմամբ» զեկուցումով։ Ակադեմիկոս Ա. Ղանալանյանի զեկուցումը նվիրված էր «Միքայել Նալբանդյանը և ժողովրդական բանահյուսությունը» թեմային։ «Մ. Նալբանդյանի աշխարհայացքի ինտերնացիոնալիզմը» զեկուցման մեջ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Գ. Դալոյանը վերլուծության ենթարկեց ռուս հեղափոխական դեմոկրատների և Նալբանդյանի աշխարհայացքային ընդհանրությունների խնդիրները։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Է. Ջրբաշյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ Մ. Նալբանդյանի արձակի գեղարվեստական համակարգի հարցերին։ «Նոր տվյալներ Մ. Նալբանդյանի և ռուս հեղափոխական դեմոկրատների կապերի մասին» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Դարոնյանը։ Պատմական գիտությունների դոկտոր Ե. Ռուդնիցկայայի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր «Մ. Նալբանդյանը հեղափոխական իրադրության տարիներին» թեմային։ Բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Գրիգորյանը (Լենինգրադ) իր զեկուցման մեջ անդրադարձավ Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության պետերբուրգյան շրջանին։ «Նալբանդյանի և ռուս հեղափոխական դեմոկրատների գաղափարական կապերի հարցի շուրջը» թեմայով զեկուցումով հանդես եկավ իրավաբանական գիտությունների դոկտոր Ե. Սկրիպիլյովը (Մոսկվա)։

Հորելյանական գիտական նստաշրջանում, որը տևեց երկու օր, լսվեցին մեծ հեղափոխական դեմոկրատի կյանքի և գործունեության բազմաոան կողմերի լուսաբանմանը նվիրված երկու տասնյակից ավելի զեկուցումներ, որոնցով հանդես եկան գրականագետ, պատմաբան, տնտեսագետ գիտնականներ։ Նրանք խոսեցին միջազգային ռեակցիայի դեմ Մ. Նալբանդյանի մղած գաղափարական պայքարի, նրա դեմոկրատական հայացքների ձևավորման ակունքների ու զարգացման ընթացքի, հայ հին գրականության նալբանդյանական գնահատության և բազմաթիվ այլ, նալբանդյանագիտության ընդհանուր նվաճումների շարքում հասնգուցային նշանակություն ունեցող խնդիրների մասին։

Նստաշրջանում նշվեց, որ սովետական իշխանության տարիներին Մ. Նալբանդյանի աշխատությունները լույս են տեսել 30 անգամ, ավելի քան 150 հազար օրինակ ընդհանուր տպաքանակով։ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը առաջիկայում լույս կոնծայի Միքայել Նալբանդյանի երկերի վեցհատորյա լիակատար ժողովածուն։

Նստաշրջանի բացմանը ներկա էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաքյանը։

Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱՍՏԱՇՐՋԱՆ

Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախի հիմնադրման 200-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական նստաշրջանը, որը տեղի ունեցավ նոյեմբերի 16-ին։

Նստաշրջանը ներածական խոսքով բաց արեց ինստիտուտի տիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Հ. Ավետիսյանը։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Բարխուդարյանը հանդես եկավ «Նոր Նախիջևանի հայկական գաղթավայրերը» զեկուցումով։ Նա նշեց, որ 1779 թ. Դոն գետի ափին հիմնադրելով իրենց նոր բնակավայրերը, Ղրիմից նովոռոսիա գաղթած հայ զանգվածը, որն ազատվում էր կայսերական հրովարտակով շնորհված արտոնություններից, առաջին մի քանի տասնամյակում ստեղծեց ոչ մեծ ծաղկուն երկրամաս՝ զարգացած գյուղատնտեսությամբ, աշխույժ առևտրով ու արհեստներով։ Կարճ ժամանակամիջոցում Ռուսաստանի ամենաներից էլ հետո տարածվեց Նոր Նախիջևանի հայ ոսկերիչ և արծաթագործ վարպետների համբավը։ Դոնի հայությունը զարգացրեց հայ և ռուս ժողովուրդների բարեկամության նոր փուլ՝ հայ ժողովրդին և երկրին պարգևելով առաջադեմ ինտերնացիոնալ գործիչների շքեղ մի համաբույլ, որն ամբողջանում է Միքայել Նալբանդյանի, Թադևոս Պատկանյանի, Սարգիս Լուկաչինի, Ալեքսանդր Մյասնիկյանի, Մարտիրոս Սարյանի և այլոց անուններով։

Անդրադառնալով գաղթօջախի պատմական զարգացման առանձնահատկություններին, զեկուցողը մասնավորապես նշեց Նոր Նախիջևանի գաղթականության խոշոր դերը հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև հայ ժողովրդի հասարակական-քաղաքական և կուլտուր-լուսավորական առաջընթացի գործում։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ներսիսյանի զեկուցումը նվիրված էր «Նոր Նախիջևանի հասարակական-քաղաքական կյանքի պատմությունից» թեմային։ Զեկուցողը նշեց, որ Նոր Նախիջևանի գաղթավայրը գործուն մասնակցություն է ունեցել Ռուսաստանի հասարակական-քաղաքական անցքերին և հեղափոխական շարժումներին։ Փաստեր բերվեցին այն մասին, որ դեռևս 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցելու նպատակով Նոր Նախիջևանում կազմակերպվել է հայ-ուկրաինական կամավորական ջոկատ։ Նորնախիջևանցիները ակտիվորեն մասնակցել են 1812 թվականի հայրենական պատերազմին, ապա Ղրիմի 1853—1856 թթ. պատերազմին և 1870-ական թվականներին՝ նարոդնիկական հեղափոխական շարժմանը։

Ռոստովի համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Բ. Զերտաբյովը քարտեզագրական նոր նյութերի հիման վրա ներկայացրեց Դոնի և մերձազովյան շրջանի հայկական բնակավայրերի կազմավորման պատմությունը։ Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մնացականյանը խոսեց ռուսական երկաթուղիներին և սոցիալիստական շինարարությանը նորնախիջևանցի գործիչների մասնակցության մասին։ Նա նշեց, որ սովետական իշխանության հաստատումից հետո Դոնի հայության լավագույն ներկայացուցիչները եկան Հայաստան և լծվեցին նրա վերականգնման ու բարգավաճման գործին։

Ռոստովի մարզի և Հայաստանի աշխատավորների սոցիալիստական մրցությանն ու համագործակցությանն էին նվիրված Ռոստովի համալսարանի ներկայացուցիչների՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Կոզլովի և պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Յու. Կնիշևնկոյի զեկուցումները։

Մ. ՄՈՒՇԵՂՅԱՆ